թյունների շարադասությանը, որը ոչ միայն ոճական, այլև իմաստային ու քերականական մեծ դեր է խաղում նախադասությունների կառուցվածքը, նրանց տեսակն ու բնույթը որոշելու համար (տե՛ս էջ 59, 73, 99, 116—117, 149, 167, 175—176, 188, 201, 213, 224, 236 և այլն և այլն)։ Հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրելով տարբեր բնույթի կախյալ նախադասությունների շարադասությունը, որոշում է նույնիսկ, թե ինչպիսի նախադասություններում է այն կայուն և ինչպիսիներում՝ ազատ։

Արտ. Պապոյանի «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում» աշխատությունը ունի գործնական և տեսական նշանակություն և արժեքավոր ներդրում է հայերենի գիտական շարահյուսության ուսումնասիրության բնագավառում։

Խ. ԲԱԴԻԿՅԱՆ

ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ — «Հայագիտական հետազոտություններ», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 2500, 490 էջ։

Պատմաբան, բանասեր և տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանի աշխատությունների ներկայացվող ընդգրկում է հեղինակի՝ մասամբ տարբեր պարբերականներում տպված, մասամբ էլ անտիպ պատմա-բանասիրական և պատմա-տնտեսագիտական երկերը, նվիրված հայագիտության կարևոր խնդիրներին։

Ժողովածուի առաջին բաժինը, որ ընդգրկում է նրա պատմա-բանասիրական աշխատությունները, սկսվում է «Միհրը հայոց մեջ» մեծարժեք մենագրությամբ։ Հեղինակը այստեղ հենվելով պատմական և բանահյուսական մի շարք փաստերի վրա, ցույց է տալիս, որ Միհրի պաշտամունքը մեծ տեղ է ունեցել հայ հեթանոսական կյանքում և ընդգծում է այդ պաշտամունքի ունեցած յուրահատկությունները։

Ավդալբեգյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել այս կամ այն պատմական, բանասիրական առեղծվածի լուծման նկատմամբ և ժողովածուում զետեղված հոդվածներից մի քանիսը, որ կրում են «Բանասերի օրագրից» ընդհանուր խորագիրը, այդպիսիք են։

«Բանասերի օրագրից» շարքում տեղավորված է նրա մի անտիպ հոդվածը, ուր հեղինակը պատմա-աշխարհագրական միջոցներով լուծում է Արաքսի և Մեծամորի հնադարյան հուներին վերաբերող առեղծվածը։ Մի շարք առեղծվածներ է լուծում նաև նրա «Զվարթնոցի շուրջը» հոդվածը։

Մեծավաստակ գիտնականը զբաղվել է նաև հայ պատմա-բանասիրական «առեղծվածների առեղծվածիՀ՝ Խորենացու ժամանակի հարցով, որը բազմաթիվ հետազոտողների վեճի առարկա էր դարձել։ Նա այդ խնդրին անդրադարձել է «Խորենացու «Պատմության» ժամանակաբանական սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ» և «Խորենացու «Պատմության» լեզուն հունաբան դպրոցի շրջանների կապակցությամբ» զեկուցումներում։

Ժողովածուի երրորդ բաժինը իր մեջ ամփոփում է Թադ. Ավդալբեգյանի պատմա-տնտեսագիտական աշխատությունները։ Այս բաժնի «Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը Ինգերորդ դարում» հետաքրքիր հոդվածում մշակելով «Կանոնգիրք հայոց»-ում պահպանված տեղեկությունները այս կամ այն հանցանքի համար տրվող պատիժների ու գանձվող տուգանքների մասին, նա ստանում է V դարում շինականի ու գեղջկուհու միջին աշխատավարձի չափերի վերաբերյալ տեղեկություններ։ Կամ՝ «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ» հոդվածում վերլուծելով հայ վիմագրության մեջ պահպանված բազմաթիվ տվյալները եկեղեցու պատվիրվող պատարագների համար ստացվող նյութական հատուցման չափերի մասին՝ եզրակացությունների է հանգում տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող ղների վերաբերյալ։ Հետազոտության նման մեթոդը ի հայտ է գալիս նաև հարկերի պատմությանը նվիրված նրա աշխատություններում, որոնցով եզրափակվում է ժողովածուն։

Գիրքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ ժողովրդի հին ու միջնադարյան պատմության մասնագետների համար։

Ի. Ռ. ՑՈԼՅԱՆ — «Կոմիտաս», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 5000, 250 էջ։

Լույս է տեսել հայ երաժշտական մշակույթի խոշորագույն դեմքերից մեկի՝ Կոմիտասի կյանքին և ստեղծագործությանը նվիրված «Կոմիտաս» մենագրությունը։

Հայ ժողովրդի պատմության մեջ Կոմիտասը մուտք է գործել իբրև ազգային երաժշտական արվեստի չգերազանցված գիտակ, բազմաշնորհ երաժիշտ և մեծատաղանդ երգահան, որ ճանապարհ է հարթել իսկական ժողովրդական-ազգային ուղղության համար։ Մինչդեռ Կոմիտասի ստեղծագործության և երաժշտական գործունեության որոշ կողմերը առ այսօր բավարար չափով չի ուսումնասիրված։ Ահա այդ բացը, ինչ-որ չափով, գալիս է լրացնելու ներկա աշխատությունը, ուր Ի. Ցոլյանը ձգտել է տալ Կոմիտասի գնահատությունը՝ գրքում ներգրավելով մի շարք նոր նյութեր, որոնք, ինչ խոսք, նպաստում են երգահանի կյանքի և ստեղծագործության առավել ճիշտ և ամբողջական լուսաբանությանը։ Այդ նպատակով, հեղինակը հիմնականում հենվելով Կոմիտասի հրատարակված հոդվածների և ուսումնասիրությունների, նրա ստեղծագործության և ազգագրական հավաքածուների վրա, օգտագործել է նաև Կոմիտասի մասին հրատարակված ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան գրականությունը, Կոմիտասին նվիրված տեսական աշխատությունները, Կոմիտասի արխիվը, որ գտնվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանում և Անդրկովկասի ու արտասահմանի պարբերական հրատարակությունները։

Գիրքը բովանդակում է հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի կյանքի և ստեղծագործության բազմակողմանի պատմությունը։ Առանձին բաժիններ նվիրված են մեծ երգահանի գեղագիտական հայացքների բնութագրությանը և նրա ստեղծագործական ժառանգության վերլուծման հարցերին։

Մ. Հ. ԱՆՏՈՆՅԱՆ — «Վ. Ի. Լենինը և հեղափոխության դիալեկտիկան», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը 2000, 220 էջ։

Այս աշխատությունը նվիրված է լենինյան տեսության կարևոր պրոբլեմին՝ սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի դիալեկտիկայի մի քանի հարցերին։

Գրքում ցույց է տրվում, թե ինչպես Լենինը զարգացրեց մարքսիստական դիալեկտիկայի այդ կողմերը՝ պատմական նոր պայմաններում։ Այդ առումով էլ՝ նախ, բացահայտվում են սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի դիալեկտիկայի մեթոդոլոգիական մի քանի սկզբունքները, այնուհետև գլխավոր ուշադրությունը նվիրվում է սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների միասնությանը և փոխներգործությանը, և, վերջապես, լուսաբանվում են արդի համաշխարհային հեղափոխական պրոցեսում օբյեկտիվ և սուբյեկտիվ դիալեկտիկայի մի քանի հարցեր։